



ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ* ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1998 թվականից ՀՀ հանրակրթության ոլորտում ընթացող կառուցվածքային բարեփոխումների բաղկացուցիչ մաս է կազմել պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման նոր՝ ըստ սովորողների թվի մեխանիզմի ներդրումը: Վերջինիս ներմուծմամբ դպրոցների պետական բյուջեի տնտեսագիտական հողվածներով ֆինանսավորման մեթոդից անցում է կատարվել ամբողջական թվով ֆինանսավորման մեխանիզմին, ըստ որի հանրակրթական դպրոցին հատկացվող տարեկան գումարի չափը հաշվարկվում է որոշակի բանաձևով՝ ելնելով հաստատության սովորողների թվից և պահպանման համար անհրաժեշտ ծախսերից:

Սույն հողվածում ներկայացվում են հանրակրթական դպրոցները համապատասխան բանաձևով ֆինանսավորելու տեսական հիմքերը, սկզբունքները և մեթոդաբանությունը, ինչպես նաև ֆինանսավորման նոր մեխանիզմի ներդրման ու կիրառման միջազգային փորձի ուսումնասիրության ամփոփ գնահատականները:

Ուսումնասիրվել են նաև Հայաստանում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի ներդրման նպատակը, խնդիրները, բանաձևի մշակման մեթոդաբանությունը, հիմնական սկզբունքները, ակնկալվող արդյունքներն ու առավելությունները, ինչպես նաև դրա կիրառման գրեթե 20-ամյա փորձի վերլուծությամբ բացահայտված խնդիրներն ու թերությունները: Արվել են առաջարկություններ բանաձևի բարելավման ուղղությամբ:

* Սկիզբը՝ նախորդ համարում:

Հիմնաբառեր. կրթության համակարգ, ֆինանսավորման բանաձև, ըստ սովորողների թվի ֆինանսավորում, կարիքների վրա հիմնված ֆինանսավորում, ֆինանսավորման սկզբունքներ, կրթության որակ, հանրակրթական դպրոց, դպրոցի արդյունավետություն, սովորողների թիվ, դպրոցի չափ, դպրոցի գտնվելու վայր, դպրոցի պահպանման ծախսեր, ազգային փոքրամասնություններ

JEL: G17, G18, I21, I22, I25, I28

9.6. Աշխատավարձերի բարձրացում

2014 թվականի բանաձևում դպրոցի պահպանման ծախսերի ընդհանուր գումարը ոչ ուսուցչական աշխատակազմի տարեկան աշխատավարձային ֆոնդից կախման մեջ դնելը պայմանավորված էր մեկ այլ հանգամանքով ևս. մասնավորապես՝ ՀՀ Կառավարության որոշմամբ՝ 2014 թվականի հունվարից բարձրացնել երկրում նվազագույն և դպրոցների ուսուցիչների միջին ամսական աշխատավարձերի չափերը: Դպրոցում նվազագույն աշխատավարձ ստանում է ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատակազմը, ուստի նախատեսված էր բարձրացնել նաև այդ հատվածի աշխատավարձի չափերը:

Աշխատավարձերի բարձրացումն ապահովելու նպատակով պետական բյուջեում նախատեսվեց լրացուցիչ գումար: Սակայն այդ որոշման կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրելու դպրոցի ուսուցչական և ոչ ուսուցչական հաստիքների փաստացի քանակը, մասնավորապես՝ նվազագույն աշխատավարձ ստացողների թիվը համադրել այդ ցուցանիշներից գոյացող աշխատավարձի ֆոնդը 2014 թվականի պետական բյուջեից դպրոցներին հատկացվելիք ընդհանուր գումարի ու դրանում ներառված աշխատավարձային ֆոնդի հետ: Այլ կերպ ասած՝ հարկ եղավ պարզելու, թե արդյոք 2014 թվականի պետական բյուջեում տարրական և միջնակարգ կրթության համար նախատեսված լրացուցիչ գումարը բավարար՞ էր դպրոցի ուսուցչական, ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատակազմերի աշխատավարձերը որոշված չափով բարձրացնելու համար՝ հիմք ընդունելով առկա հաստիքային միավորների փաստացի թիվը:

Այսպես՝ ՀՀ Կառավարությունը նախատեսեց ուսուցիչների միջին հաշվարկային աշխատավարձը (մանկավարժական լրիվ դրույքի) 2014 թվականին բարձրացնել մոտ 10%-ով և դարձնել 152100 դրամ՝ իսկ նվազագույն աշխատավարձը՝ 66990 դրամ՝ 2013 թ. համապատասխանաբար՝ 142934 և 46556 դրամների փոխարեն: Նշված չափով աշխատավարձի աճն ապահովելու նպատակով 2014 թվականի պետական բյուջեում դպրոցների համար նախատեսվեց **4 938 669 700 դրամ լրացուցիչ գումար**: Այսպիսով՝ 2014 թվականի պետական բյուջեում տարրական և միջնակարգ կրթությանը հատկացվող ընդհանուր գումարը կազմեց **77 532 734 700 դրամ**՝ նախորդ տարվա **72 594 065 000 դրամի** փոխարեն¹:

Սակայն հանրապետության բոլոր դպրոցներից հավաքագրված տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ 2014 թվականի պետական բյուջեում նախատեսված լրացուցիչ գումարը չի բավարարում առկա ուսուցչական և

¹ Տվյալները վերցված են «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» (12.12.2013 թ.) և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներից (05.12.2012 թ.):

ուսումնաօժանդակ աշխատակազմների աշխատավարձը (հաշվարկված հաստիքների թվով) նախատեսված չափով բարձրացնելու համար: Ըստ այդմ՝ էական տարբերություն արձանագրվեց նշված աշխատակազմների հաստիքների ընդհանուր և սովորողների թվով ֆինանսավորման բանաձևի հաշվարկի հիմքում առկա հաստիքների հաշվարկային թվերի միջև: Այսպես՝ 2013 թվականին դպրոցների ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատակազմների հաստիքների փաստացի թիվը 18108 էր², մինչդեռ պետբյուջեից դպրոցներին հատկացված գումարում այդ հաստիքների հաշվարկային թիվը մոտ 2 անգամ փոքր էր՝ ընդամենը 9944 հաստիք:

Հետևաբար՝ եթե 2014 թվականի աշխատավարձային ֆոնդի հաշվարկը կատարվեր ըստ դպրոցներում ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատակազմների հաստիքների փաստացի թվի (18108 հաստիք), ապա աշխատավարձի աճի համար նախատեսված մոտ 4,9 մլրդ դրամ լրացուցիչ գումարը չէր բավարարի: Մանրամասն հաշվարկները ցույց տվեցին, որ նման պարագայում անհրաժեշտ կլիներ մոտ 11,13 մլրդ դրամ լրացուցիչ գումար՝ գրեթե 2,3 անգամ ավելի, քան հնարավոր էր հատկացնել և նախատեսած էր 2014 թվականի պետական բյուջեում:

Աղյուսակ 7-ում ներկայացված են 2013 թվականին դպրոցներում առկա հաստիքների փաստացի քանակի վերաբերյալ ամփոփ տվյալներ.

Աղյուսակ 7

Դպրոցների, սովորողների և հաստիքների թվերի վերաբերյալ 2013 թ. տվյալներն ըստ դպրոցների ենթակայության³

Մարզեր, Երևան, ԿԳՆ	Դպրոց	Սովորող	Հաշվապահներ		Ուսումնաօժ. աշխ.	
			Աշխատող	Հաստիք	Աշխատող	Հաստիք
ՀՀ ԿԳՆ	116	54359	110	109,5	1679	2065,9
Երևան	160	77559	160	160,0	3194	3790,8
Արագածոտն	119	17053	121	103,5	1107	1001,7
Արարատ	107	30700	107	101,5	1346	1328,3
Կոտայք	90	27031	90	89,5	1250	1331,8
Լոռի	151	25438	151	151,0	1438	1462,8
Վայոց ձոր	47	6218	47	36,0	507	433,5
Արմավիր	112	31081	112	111,5	1300	1612,5
Գեղարքունիք	117	27823	117	100,0	1518	1615,0
Սյունիք	113	14212	113	74,3	1257	1090,2
Շիրակ	153	26061	152	130,8	1860	1601,2
Տավուշ	77	14988	77	63,3	792	774,7
Ընդամենը	1362	352523	1357	1230,9	17247	18108,1

Աղյուսակ 8-ում բերված է 2013 թվականի ՀՀ պետական բյուջեով դպրոցների համար նախատեսված աշխատավարձային ֆոնդի հաշվարկը՝ ելնելով հաստիքների հաշվարկային թվից, ինչպես նաև 2014 թվականի համար անհրաժեշտ աշխատավարձային ֆոնդի հաշվարկը՝ ըստ դպրոցներում առկա ուսումնաօժանդակ և տնտեսական հաստիքների փաստացի թվի:

² Ցուցանիշներն ըստ ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԿԳ նախարարության ներկայացրած տվյալների:

³ Ցուցանիշներն ըստ նույն աղբյուրների:

2013 և 2014 թթ. ՀՀ պետական բյուջեով դպրոցների համար նախատեսված աշխատավարձային ֆոնդի հաշվարկը

	<i>2013 թ. աշխատավարձային ֆոնդի հաշվարկը՝ ելնելով հաստիքների հաշվարկային թվից</i>	<i>2014 թ. աշխատավարձային ֆոնդի հաշվարկը՝ ելնելով առկա հաստիքների փաստացի թվից</i>
Հիմնական մանկավարժական հաստիքների/դրույքների թիվը	22 253	22 253
Մանկավարժների միջին ամսական աշխատավարձը (դրամ)	142 934	152 100
Մանկավարժների տարեկան աշխատավարձային ֆոնդը (դրամ)	38 168 733 146	40 616 540 640
Այլ մանկավարժական հաստիքների թիվը	2 418	2 418
Մանկավարժական այլ աշխատողների ամսական աշխատավարձը (դրամ)	122 625	152 100
Մանկավարժական այլ աշխատողների տարեկան աշխատավարձային ֆոնդը (դրամ)	3 557 945 653	4 413 151 080
Վարչական աշխատակազմի հաստիքներ	3 805	3 805
Վարչական աշխատակազմի միջին ամսական աշխատավարձը (դրամ)	210 033	174 800
Վարչական աշխատակազմի տարեկան աշխատավարձային ֆոնդը (դրամ)	9 589 607 267	7 980 948 480
Հաշվապահական հաստիքների թիվը	1 230	1 231
Հաշվապահների միջին ամսական աշխատավարձը (դրամ)	104 607	133 700
Հաշվապահների տարեկան աշխատավարձային ֆոնդը (դրամ)	1 543 494 255	1 974 823 872
Ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատակազմի հաստիքների/դրույքների թիվը	9 944	18 108
Ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատակազմի միջին ամսական աշխատավարձը (դրամ)	46 556	66 990
Ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատակազմի տարեկան աշխատավարձի ֆոնդը (դրամ)	5 555 163 170	14 556 723 350
Ընդամենը աշխատավարձային ֆոնդ (դրամ)	58 414 943 491	69 542 187 422
Անհրաժեշտ լրացուցիչ գումար (դրամ)		11 127 243 931

Ակնհայտ էր, որ խնդիրը հրատապ լուծման կարիք ուներ: Ուստի որոշվեց նորմավորել հաստատությունների ոչ ուսուցչական հաստիքների թիվը՝ հիմք ընդունելով հաստատության սովորողների թիվը, իսկ պահպանման ծախսերի ընդհանուր գումարը պայմանավորել ոչ ուսուցչական անձնակազմի տարեկան աշխատավարձային ֆոնդով:

Մշակվեցին տարբեր սցենարներ, և որոշվեց ոչ ուսուցչական հաստիքների նվազագույն թիվը 2014 թվականի բանաձևում սահմանել հետևյալ կերպ.

- 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 9 հաստիք,
- 101-ից 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 12 հաստիք,
- 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 15,5 հաստիք:

9-րդ և 10-րդ աղյուսակների միջոցով ներկայացնենք մանրամասն հաշվարկներ:

Ինչպես երևում է աղյուսակներից, ոչ ուսուցչական հաստիքների՝ սահմանված թվերով և աշխատավարձերի չափերով դպրոցների աշխատավարձային ֆոնդը 2014 թվականի համար կազմեց մոտ 63,3 մլրդ դրամ՝ 2013 թվականի 58,4 մլրդ դրամի դիմաց, այսինքն՝ 4,9 մլրդ դրամով ավելի: Այսպիսով՝ հնարավորություն ստեղծվեց անհրաժեշտ չափով ապահովելու դպրոցների աշխատակազմի աշխատավարձերի և ընդհանուր աշխատավարձային ֆոնդի աճը:

Աղյուսակ 9

Ոչ ուսուցչական հաստիքների 2013 թվականի նվազագույն թիվն ըստ մեկ դպրոցի և դպրոցների ընդհանուր թվի

	<i>100 և պակաս թվով աշա- կերտ ունեցող դպրոցներ</i>	<i>101-ից 300 աշակերտ ունեցող դպրոցներ</i>	<i>301-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցներ</i>	<i>Հաստիքների ընդհանուր թիվը</i>
Վարչական հաստիքների թիվն ըստ մեկ դպրոցի	1	2	3	
Հաշվապահական հաստիքների թիվն ըստ մեկ դպրոցի	0,5	1	1	
Ուսումնաօժանդակ հաստիքների թիվն ըստ մեկ դպրոցի	7,5	9	11,5	
<i>Ոչ ուսուցչական հաստիքների ընդհանուր թիվն ըստ մեկ դպրոցի</i>	9	12	15,5	
Դպրոցների թիվը	378	489	495	1362
Վարչական հաստիքների ընդհանուր թիվը	378	978	1485	2841
Հաշվապահական հաստիքների ընդհանուր թիվը	189	489	495	1173
Ուսումնաօժանդակ հաստիքների ընդհանուր թիվը	2835	4401	5692,5	12 928,5
<i>Ոչ մանկավարժական հաստիքների ընդհանուր թիվը</i>	3402	5868	7672,5	16 942,5
<i>Մանկավարժական հաստիքների ընդհանուր թիվը</i>				24 671

Պետական դպրոցների 2014 թ. աշխատավարձային ֆոնդի հաշվարկն ըստ բոլոր հաստիքների

	Վարչական հաստիքներ	Հաշվապահներ	Ուսումնաօժանդակ հաստիքներ	Մանկավարժական հաստիքներ	Ընդամենը
Ամսական միջին հաշվարկային աշխատավարձ (դրամ)	174 800	133 700	66 990	152 100	
Տարեկան աշխատավարձ՝ ըստ մեկ հաստիքի (դրամ)	2 097 600	1 604 400	803 880	18 25 200	
2014 թ. աշխատավարձի ֆոնդն ըստ բոլոր հաստիքների՝ նշված տարվա համար նախատեսված աշխատավարձերի չափով (դրամ)	5 959 281 600	1 881 961 200	10 392 962 580	45 029 691 720	63 263 897 100
2013 թ. աշխատավարձի ֆոնդն ըստ բոլոր հաստիքների (դրամ)	9 589 607.267	1 543 494 255	5 555 163 170	41 726 678 799	58 414 943 491
2013 և 2014 թթ. աշխատավարձի ֆոնդերի միջև տարբերությունը (դրամ)	3 630 325 667	-338 466 945	-4 837 799 410	-3 303 012 921	-4 848 953 609

9.7. 2015 թվական

2015 թվականին ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևում պահպանվեցին 2014 թվականին սահմանված սկզբունքները, սակայն որոշ չափով բարձրացվեցին մեկ սովորողին բաժին ընկնող գումարի չափը և հաստատության պահպանման ծախսերի գումարը⁴:

2015 թվականի բանաձևի համար սահմանվեց.

- մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարը (Սգ)՝ 124 000 դրամ,
- 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների պահպանման ծախսերի նվազագույն գումարը (Պգ)՝ 19000.0 հազ. դրամ (ներառյալ ոչ ուսուցչական աշխատակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը),
- 101-ից 300 աշակերտ և 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների պահպանման ծախսերի նվազագույն գումարը (Պգ) բաղկացած է հաստատության պահպանման ծախսերից՝ 3481.5 հազ. դրամ, ինչպես նաև ոչ ուսուցչական աշխատակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից, որը տարբերակվում է ըստ սովորողների թվի,

⁴ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարի 10.12.2014 թ. N881-Ն և ՀՀ ԿԳ նախարարի 17.12.2014 թ. N1167-Ն համատեղ հրամանը «2015 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:

- սովորողների թվից ելնելով՝ ոչ ուսուցչական աշխատակազմի նվազագույն հաստիքների քանակը կազմում է.
 - 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 9 հաստիք,
 - 101-ից մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 12 հաստիք,
 - 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 15,5 հաստիք:

Որպես հաստատության սովորողների թիվ՝ Սթ, ընդունվում է աշակերտների միջին տարեկան քանակը, որը ենթակա է ճշգրտման ուսումնական տարվա սկզբին՝ հաշվի առնելով դասարանների փաստացի համալրումը:

Աղյուսակ 11-ում ամփոփ կերպով տրված են 2015 թվականին մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող գործակիցների արժեքները:

Աղյուսակ 11

2015 թվականի բանաձևում մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ

<i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ՝ ըստ կրթական աստիճանների</i>	
<i>Տարրական</i>	0,8042
<i>Միջին</i>	1,1179
<i>Ավագ</i>	1,1581
<i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ՝ ըստ դպրոցի գտնվելու վայրի</i>	
<i>Բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներ</i>	1,13
<i>Լեռնային բնակավայրերի դպրոցներ</i>	1,04
<i>Բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցներ</i>	1,2
<i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակից ավագ դպրոցների համար</i>	
<i>Ավագ դպրոց</i>	1,14

Ինչպես երևում է աղյուսակից, 2015 թվականին լրացուցիչ գործակիցները, ըստ էության, մնացին նույնը՝ փոփոխությունները չնչին էին:

9.8. 2016 թվական

2016 թվականին ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևում կատարվեց առանցքային փոփոխություն՝ լրացվեց 2 նոր բաղադրիչներով, որոնց միջոցով հաշվարկվում են հետևյալ նպատակներով դպրոցին հատկացվող լրացուցիչ գումարները.

- դպրոցի տարրական դասարանների աշակերտներին և նախակրթարանի երեխաներին սննդով ապահովում,
- սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերով ապահովում:

Մասնավորապես՝ 2016 թվականին դպրոցներին հատկացվող բյուջետային միջոցների հաշվարկման համար սահմանվեց հետևյալ բանաձևը⁵.

⁵ ՀՀ ֆինանսների նախարարի 11.12.2015 թ. N 886-Ն և ՀՀ ԿԳ նախարարի 17.12.2015 թ. N1041-Ն համատեղ հրամանը «2016 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:

$$Ըզ = U\beta \times U\alpha + \text{Պ}\alpha + S U\beta \times UO\beta \times U\text{Մ}\alpha + \text{ՀՈՒՀ} U\beta \times 0.1 \times S U\alpha\eta\alpha,$$

- որտեղ՝ $U\alpha$ -ն մեկ օրացուցային տարվա համար դպրոցին հատկացվող ընդհանուր գումարն է,
 $U\beta$ -ն՝ դպրոցի սովորողների թիվը,
 $U\alpha$ -ն՝ մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարը,
 $\text{Պ}\alpha$ -ն՝ դպրոցի պահպանման ծախսերի տարեկան նվազագույն գումարը,
 $S U\beta$ -ն՝ դպրոցի տարրական դասարանների սովորողների և նախակրթարանի երեխաների միջին տարեկան թիվը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին,
 $UO\beta$ -ն՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում դպրոցի աշխատանքային օրերի քանակը,
 $U\text{Մ}\alpha$ -ն՝ դպրոցի տարրական դասարանների սովորողներին և նախակրթարանի երեխաներին սննդով ապահովման մեկ օրվա գումարը,
 $\text{ՀՈՒՀ} U\beta$ -ն՝ դպրոցի սովորողների (բացառությամբ տարրական դասարանների) թիվը ուսումնական տարվա սկզբին,
 $S U\alpha\eta\alpha$ -ն՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցման տարեկան գումարը:

Բանաձևի վերը նշված անդամների համար 2016 թվականին սահմանվեցին հետևյալ արժեքները.

Աղյուսակ 12

2016 թվականի բանաձևի տարբեր անդամների արժեքները

Բանաձևի անդամ	Արժեք
Uα	124 000 դրամ
Պα	<ul style="list-style-type: none"> • ≤ 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 19000.0 հազ. դրամ՝ ներառյալ ոչ ուսուցչական աշխատակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը, • ≥ 101 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 3727.5 հազ. դրամ՝ գումարած ոչ ուսուցչական աշխատակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը, որը հաշվարկվում է՝ ելնելով հաստիքների հետևյալ քանակներից. <ul style="list-style-type: none"> – ≤ 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 9 հաստիք – 101-ից 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 12 հաստիք – ≥ 301 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 15,5 հաստիք
UOβ	168 օր
UՄα	140 դրամ
S Uαηα	<ul style="list-style-type: none"> • 5342.3 դրամ՝ միջին դպրոցի սովորողների համար (5–9 դասարաններ) • 6059.9 դրամ՝ ավագ դպրոցի սովորողների համար (10–12 դասարաններ)

Բացի այդ, բանաձևով հաշվարկը կատարելու համար մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ սահմանվեցին հետևյալ գործակիցները.

2016 թվականի բանաձևում մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ

<i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող գործակիցներ՝ ըստ կրթական աստիճանների</i>	
<i>Տարրական</i>	0,8075
<i>Միջին</i>	1,1224
<i>Ավագ</i>	1,1628
<i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ՝ ըստ դպրոցի գտնվելու վայրի</i>	
<i>Բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներ</i>	1,13
<i>Լեռային բնակավայրերի դպրոցներ</i>	1,04
<i>Բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցներ</i>	1,2
<i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակից ավագ դպրոցների համար</i>	
<i>Ավագ դպրոցներ</i>	1,6083

Աղյուսակ 13-ից երևում է, որ մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ ըստ կրթական աստիճանի (տարրական, միջին, ավագ) կիրառվող գործակիցները 2015 թվականի համեմատությամբ փոքր-ինչ աճել են, ըստ դպրոցի գտնվելու վայրի (բարձրլեռնային բնակավայրերի, լեռային բնակավայրերի, բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցներ) կիրառվող գործակիցները մնացել են նույնը, իսկ ավագ դպրոցների համար լրացուցիչ գործակիցն էականորեն՝ 75%-ով աճել է:

2016 թվականի բանաձևում նոր բաղադրիչների ավելացումն առաջադիմական քայլ էր՝ ուղղված «կարիքների վրա հիմնված» (needs based) ֆինանսավորման մոտեցումների կիրառմանը:

Ըստ էության, ներկայումս բանաձևը հաշվի է առնում դպրոցների որոշ առանձնահատկությունները և կարիքները: Մասնավորապես՝ հնարավորություն է տալիս տարբերակված մոտեցում ցուցաբերելու դպրոցներին՝ ելնելով հետևյալ գործոններից.

- հաստատության գտնվելու վայր և աշխարհագրական դիրք (լեռնային, բարձրլեռնային և բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոց),
- հաստատության մեծություն (շատ փոքր դպրոցներ՝ ≤ 100 աշակերտ ունեցող, փոքր դպրոցներ՝ 101-ից 300 աշակերտ ունեցող, միջին և մեծ դպրոցներ՝ $301 \geq$ աշակերտ ունեցող),
- հաստատության կողմից իրականացվող կրթական ծրագրերի աստիճան (տարրական, հիմնական, ավագ) և հաստատության տիպ (միայն ավագ դպրոցների պարագայում),
- հաստատության սովորողների որոշ սոցիալական կարիքներ (անվճար դասագրքեր սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին և սնունդ նախադպրոցական տարիքի ու տարրական դասարանների երեխաներին):

10. Ֆինանսավորման նոր համակարգի կիրառման առավելությունները

Վերլուծելով Հայաստանում ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի կիրառության ավելի քան 15-ամյա փորձը՝ կարելի է հստակ մատնանշել տվյալ մեխանիզմի առավելություններն ու թերությունները:

Ստորև բերված են բանաձևի կիրառման արդյունքում արձանագրված դրական զարգացումները⁶: Այսպես՝

- Աճեց դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության ինքնուրույնությունը: Դպրոցներին հնարավորություն տրվեց ինքնուրույն կազմելու իրենց տարեկան նախահաշիվները (բյուջե)՝ պլանավորելով եկամուտներն ու ծախսերը:
- Բարձրացավ դպրոցների և, ընդհանուր առմամբ, հանրակրթական համակարգի հաշվետվողականության մակարդակը, քանի որ դպրոցների ինքնուրույնության աճին զուգընթաց ներդրվեց ֆինանսական հաշվետվությունների կազմման (պետության կողմից սահմանված ձևերով և ժամկետներում) և դրանք համապատասխան կառավարման մարմիններին ներկայացման գործառույթ:
- Բարձրացավ բյուջետային միջոցների բաշխման արդարության և օբյեկտիվության աստիճանը, քանի որ պետական բյուջեից սահմանված չափով գումար սկսեց հատկացվել յուրաքանչյուր աշակերտի պարտադիր ուսումն ապահովելու համար:
- Մեծացավ բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունն ու նպատակայնությունը:
- Հատուկ մոտեցում ցուցաբերվեց դպրոցների այն կատեգորիաներին, որոնք գտնվում էին առավել դժվարին պայմաններում: Մասնավորապես՝ լրացուցիչ ֆինանսավորում սկսեց հատկացվել լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի, ինչպես նաև բնակավայրի միակ, բայց 400-ից պակաս սովորող ունեցող դպրոցներին: Միաժամանակ, պետությունը տարբերակված մոտեցում ցուցաբերեց դպրոցներին՝ ելնելով սովորողների թվից:
- Առանձնահատուկ մոտեցում ցուցաբերվեց նաև առանձին գործող ավագ դպրոցներին՝ ընթացող բարեփոխումները խթանելու նպատակով:
- Բարենպաստ պայմաններ ստեղծվեցին շատ փոքր դպրոցների (≤ 100 աշակերտ ունեցող) համար:
- Մեկ սովորողին հատկացվող գումարի պարագայում հաշվի առնվեց այն հանգամանքը, որ կրթության արժեքը միջնակարգ կրթության տարբեր աստիճաններում (տարրական, հիմնական, ավագ) տարբեր է. ավագ դասարաններում ավելի թանկ է, քան միջին դասարաններում, իսկ միջին դասարաններում թանկ է տարրականներից:
- 2016 թվականից բանաձևը որոշ չափով սոցիալապես աջակցության տարրեր սկսեց ներառել: Մասնավորապես՝ դպրոցին հատկացվող գումարի հաշվարկում ընդգրկվեցին սովորողների որոշ սոցիալական կարիքները հոգացող ծախսեր (սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ անվճար դասագրքեր, նախադպրոցական և տարրական դասարանների երեխաներին՝ անվճար սնունդ):

⁶ Տես Կ. Հարությունյան, Հ. Մաղաքյան, Վ. Հարությունյան, Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի ներդրումն ու կիրառումը, Մանկավարժություն, հ. 2, Եր., 2012, էջ 5–16:

- Ամբողջական գումարով ֆինանսավորման արդյունքում ակնհայտորեն մեծացավ դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության ճկունությունը: Ի տարբերություն պետական բյուջեի առանձին տնտեսագիտական հողվածներով ֆինանսավորման նախկին կարծր սկզբունքի՝ դպրոցներին հնարավորություն ընձեռվեց ինքնուրույն պլանավորելու սեփական տարեկան ծախսերը, իսկ խնայողությունների դեպքում վերաբաշխելու խնայված գումարներն ըստ առաջնահերթ կարիքների:
- Մեծացավ դպրոցների գործունեության թափանցիկությունը և մասնակցությունը, քանի որ ֆինանսավորման նոր մեխանիզմի հետ մեկտեղ ներդրվեց նաև կառավարման նոր կառուցակարգ: Ձևավորվեցին դպրոցի խորհրդակցական կառավարման մարմիններ՝ խորհուրդներ, որոնց վերապահվեցին մի շարք կառավարչական գործառնություններ՝ տնօրենի ընտրությունը, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգի հաստատումը, դպրոցի տարեկան բյուջեի (նախահաշվի) քննարկումը, նպատակային ծրագրերի քննարկումը, գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների հաստատումը, դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունների և համամասնությունների սահմանումը, ինչպես նաև ծախսերի նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Կառավարման խորհուրդները, որոնց կազմում ծնողներ, ուսուցիչներ, տեղական (համայնքային) կամ տարածքային (մարզային) կառավարման մարմինների ներկայացուցիչներ են, նպաստեցին հաշվետվողականության մշակույթի զարգացմանը և դպրոցի կառավարման ու ֆինանսատնտեսական գործունեության մեջ հանրային մասնակցության ընդլայնմանը:

Խորհուրդների կազմավորումը նպաստեց նաև ծնողների ու համայնքի կողմից ներդրումների խթանմանը: Դրանով իսկ դպրոցներին հնարավորություն տրվեց ձևավորելու արտաբյուջետային միջոցներ:

Ըստ սովորողների թվի ֆինանսավորման սկզբունքն անուղակիորեն խթանեց ներդպրոցական հիմնական ցուցանիշների՝ դասարանների խտության, ուսուցիչների ծանրաբեռնվածության, աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների բարելավումը և նպաստեց միջդպրոցական մրցակցության զարգացմանը:

Ի վերջո, հարկ է անդրադառնալ ֆինանսավորման բանաձևի ներդրման հետևյալ ռազմավարական մոտեցումներին, որոնք ապահովեցին դրա հաջող կիրառումը.

- Բանաձևը ներդրվեց ոչ թե միանգամից բոլոր դպրոցներում, այլ աստիճանաբար՝ մի քանի տարվա ընթացքում, ընդ որում, ներդրումը սկսվեց փորձնական փուլով: Փուլային ներդրման նման մոտեցումը թույլ տվեց խուսափել խոշոր սխալներից և շարունակաբար բարելավել բանաձևը՝ ելնելով ի հայտ եկած խնդիրներից:
- Բանաձևի ներդրման ընթացքում ոչ մի դպրոց չտուժեց, քանի որ պետական բյուջեում նախատեսվեցին անցումային փուլի ծախսեր:
- Բանաձևի առավելություններից էր պարզությունը՝ հատկապես դրա ներդրման և կիրարկման սկզբնական շրջանում:

Ռազմավարական այս սկզբունքներն այն կարևոր գործոններն էին, որոնք ապահովեցին, որ հանրության հիմնական շերտերը և հատկապես դպրոցներին առնչվող շահառու խմբերը ֆինանսավորման նոր մեխանիզմը

հեշտությամբ ընկալեն: Հետագայում բանաձևն աստիճանաբար փոփոխվեց՝ ներառելով նորանոր գործակիցներ, հաշվարկման նոր սկզբունքներ ու բաղադրիչներ: Սակայն, քանի որ ըստ աշակերտների ֆինանսավորման մեխանիզմն արդեն լավ հայտնի էր և հասկանալի, բոլոր հետագա փոփոխությունները կատարվեցին առանց ցնցումների:

11. Ֆինանսավորման նոր համակարգի խնդիրները և թերությունները

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի ավելի քան 15-ամյա փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա հաշվարկման և կիրառման սկզբունքներում առկա են որոշակի խնդիրներ և մարտահրավերներ, որոնք ներկայացված են ստորև:

– Բանաձևը դեռևս հաշվի չի առնում առանձին դպրոցների որոշակի կարիքներ, չնայած այն հանգամանքին, որ դպրոցներին հատկացվող գումարի հաշվարկման մեխանիզմում աստիճանաբար ներդրվել են տարբեր գործակիցներ՝ ապահովելով տարբերակված մոտեցում դպրոցների որոշակի խմբերին, իսկ պահպանման գումարը կախման մեջ է դրվել դպրոցի սովորողների թվից և ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձային ֆոնդից:

Իրականում այն հաշվի չի առնում դպրոցական շենքի տիպը, մեծությունը, ֆիզիկական վիճակը, կրթության առանձնահատուկ կարիքներով կամ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների ուսուցման հետ կապված լրացուցիչ ծախսերը, դպրոցի կողմից որոշ առարկաների գծով խորացված կամ հոսքային ծրագրերով դասավանդումը, սովորողների սոցիալական կարիքները և այլն:

Մասնավորապես՝ գործող բանաձևում դպրոցի պահպանման ծախսերի գումարը չի տարբերակվում ըստ դպրոցական շենքի տիպի ու ֆիզիկական վիճակի: Դրա հետևանքով, օրինակ՝ աշակերտների թվի առումով միևնույն խմբի բոլոր դպրոցներին (օրինակ՝ 101-ից 300 կամ 301-ից ավելի աշակերտ ունեցող) տրվում է պահպանման ծախսի միևնույն միջինացված գումարը, մինչդեռ առանձին դպրոցներ՝ կախված շենքային հզորությունից, շենքի տիպից, վերանորոգման անհրաժեշտությունից, ջեռուցման տեսակից և այլ հանգամանքներից, տարբեր ֆինանսական հատկացումների կարիք ունեն:

– Համաձայն գործող բանաձևի՝ դպրոցի ֆինանսավորումը և սովորողների թիվը ուղիղ համեմատական են: Դա խթանում է դպրոցներում սովորողների թվի ավելացումը՝ առանց հաշվի առնելու դպրոցի շենքային հզորությունները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հանրապետության դպրոցների մեծ մասի շենքերը տիպային են և նախատեսված են որոշակի թվով սովորողների համար: Քաղաքային բնակավայրերի դպրոցները, հատկապես բարձր վարկանիշ ունեցողները, հաճախ ընդգրկում են ավելի մեծ թվով սովորողների, քան թույլ են տալիս շենքային պայմանները՝ ավելի մեծ չափի ֆինանսավորում ստանալու նպատակով: Մինչդեռ, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, ցանկալի է չզերազանցել դպրոցի նախագծային հզորությունը:

– Ինչպես արդեն նշվեց, ամբողջական գումարով ֆինանսավորման մեխանիզմի կիրառման արդյունքում որոշակիորեն մեծացավ դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության ինքնուրույնությունը. վերջիններս սկսե-

ցին կազմել տարեկան սեփական ծախսերի նախահաշիվները: Մինչև 2010 թվականը կազմված նախահաշիվները քննարկվում և հաստատվում էին դպրոցական խորհրդի կողմից: Սակայն, ՀՀ Կառավարության 2010 թվականի որոշմամբ⁷ հաստատվեց «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության նոր տարբերակը, որով դպրոցի ընդհանուր կառավարման իրականացումը, ներառյալ ամենամյա ծախսերի նախահաշվի, հաստիքային և տարիֆիկացման ցուցակների և հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտի հաստատումը, վերապահվեց ըստ ենթակայության դպրոցի կառավարման լիազոր մարմնին՝ ՀՀ ԿԳ նախարարությանը, մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին: Խորհրդի լիազորությունների թվում մնաց միայն նախահաշվի քննարկումը: Այս որոշումն հետընթաց քայլ էր դպրոցների ինքնուրույնության աճի և կառավարման խորհուրդների ինստիտուտի զարգացման քաղաքականության մեջ:

– Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան և դպրոցի պահպանման ծախսերի գումարների արժեքները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով պետական բյուջեում հանրապետության բոլոր դպրոցների համար նախատեսված հանրագումարային ֆինանսավորման չափը, և տվյալ խմբի բոլոր դպրոցների համար կիրառվում են միևնույն ցուցանիշները: Մինչդեռ պետական բյուջեի ձևավորման փուլում ծախսերի նորմատիվային հաշվարկներն իրականացվում են յուրաքանչյուր մարզի համար առանձին՝ հաշվի առնելով տվյալ մարզի ծախսային ցուցանիշների առանձնահատկությունները: Արդյունքում՝ բանաձևով ֆինանսավորվող դպրոցների ծախսերը հաշվարկելիս ի հայտ են գալիս տարբերություններ՝ նորմատիվներով հաշվարկված ծախսերի համեմատությամբ (որոշ մարզերում առաջանում է ծախսերի նվազում կամ ավելացում): Ըստ այդմ՝ առաջանում է ծախսերի վերաբաշխման անհրաժեշտություն ինչպես միևնույն մարզի դպրոցների, այնպես էլ տարբեր մարզերի միջև:

– Ինչպես նշվեց, բանաձևի առավելություններից մեկը սկզբնական շրջանում դրա մաթեմատիկական պարզությունն էր. դա դպրոցին հատկացվող տարեկան գումարի և աշակերտների թվի միջև ուղիղ համեմատական կապ արտահայտող պարզ գծային հավասարում է: Սակայն հենց այդ պարզ մաթեմատիկական հավասարումը որոշ ժամանակ անց սկսեց որոշակի խնդիրներ ստեղծել: Մասնավորապես՝ աշակերտների փոքր թիվ ունեցող դպրոցներին (<301 աշակերտ) տրամադրվող տարեկան գումարը մեծ չէր, և դպրոցը դժվարանում էր իրականացնել բնականոն գործունեություն տվյալ գումարի սահմաններում:

Խնդրի կարգավորման նպատակով Կառավարությունը հաստատեց «պաշտպանված» ռազմավարական նշանակություն ունեցող փոքր դպրոցների ցանկ: Նշված ցանկում ընդգրկված դպրոցներին տրամադրվող գումարը բանաձևով չէր հաշվարկվում, սակայն հատկացումը կատարվում էր ամբողջական գումարով: Այդպիսի դպրոցների թիվը 8 տարում 283-ից հասավ 403-ի, և աճի միտումը շարունակվում էր, քանի որ բանաձևով ֆինանսավորումը բարենպաստ չէր մինչև 400 աշակերտ ունեցող հանրապետության մոտ 700 դպրոցների համար: Բնականաբար, բոլոր 700 դպրոցները,

⁷ Տե՛ս ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N954-Ն որոշումը «ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

որոնք հանրապետության դպրոցների գրեթե կեսն էին կազմում, չէին կարող ընդգրկվել «պաշտպանվածների» ցանկում, քանի որ ֆինանսավորման նոր համակարգի տրամաբանությունը և քաղաքականությունը ամբողջապես կխաթարվեր:

Որպես հարցի լուծում՝ 2007 թվականից վերացվեց «պաշտպանված դպրոց» հասկացությունը, և հանրապետության բոլոր դպրոցների ֆինանսավորումը սկսեց իրականացվել բանաձևով: Փոխարենը, տվյալ բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների նկատմամբ սկսեց կիրառվել համապատասխան գործակից:

Բացի այդ, եթե բանաձևի գործադրման առաջին տարիներին Կառավարության կողմից ավելացվում էր միայն մեկ աշակերտին հատկացվող գումարի չափը, ինչը շահեկան էր հիմնականում մեծ դպրոցների համար, ապա փոքր դպրոցների ֆինանսական խնդիրները կարգավորելու նպատակով 2003 թվականից տարեցտարի սկսեց մեծացվել նաև բանաձևի հաստատուն թիվը, ընդ որում՝ բավական կտրուկ: Վերջինիս աճը նկատելիորեն բարենպաստ վիճակ ստեղծեց փոքր դպրոցների համար (<301 աշակերտ), որոնք սկսեցին լուծել և՛ շենքի պահպանման, և՛ ուսուցիչների աշխատավարձերի աճի և այլ հարցեր:

Սակայն պետք է հաշվի առնել, որ բանաձևը պետական բյուջեից դպրոցական համակարգին հատկացվող ընդհանուր գումարը առանձին դպրոցների միջև բաժանելու մեխանիզմ է, իսկ այդ գումարը սահմանափակ է: Փոքր և մեծ դպրոցներին տրամադրվում էր պետական բյուջեից դպրոցական համակարգին հատկացվող հանրագումարային ֆինանսավորման բավական մեծ մասնաբաժինը, ուստի միջին չափի դպրոցները հայտնվեցին անբարենպաստ վիճակում:

Այսպիսով՝ բանաձևի ուղիղ համեմատական կապը մի կողմից՝ լինելով շատ պարզ, հեշտ հասկանալի և կիրառելի, մյուս կողմից՝ ձկուն չէր և կիրառման ընթացքում առաջ էր բերում որոշակի խնդիրներ: Հարցի կարգավորման նպատակով ՀՀ Կառավարության կողմից⁸ թույլատրվեց դպրոցի պետական կառավարման լիազորված մարմնին (մարզպետարան, քաղաքապետարան, ԿԳՆ) վերաբաշխումներ կատարել իրենց ենթակայության դպրոցների ծախսերում: Սակայն այս որոշումն իրականում հետընթաց էր, քանի որ պատճառ դարձավ դպրոցների ծախսերի ձևավորման գործընթացում սուբյեկտիվ գործոնի մեծացմանը և օբյեկտիվության նվազմանը: Մինչդեռ, բանաձևով ֆինանսավորման կարևոր նպատակներից էր պետական բյուջեի միջոցների բաշխման գործընթացի թափանցիկության և արդարության աստիճանի բարձրացումը՝ նվազեցնելով սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը:

Ներկայումս դպրոցին հատկացվող տարեկան գումարի և աշակերտների թվի միջև կապն ուղիղ համեմատական չէ: Սակայն վերաբաշխումներ կատարելու քաղաքականությունը ևս ճիշտ չի մշակված: Բանաձևի կիրառման խնդիրներն անհրաժեշտ է լուծել՝ բարելավելով բանաձևը և անցում կատարելով ավելի ձկուն՝ «կարիքների վրա հիմնված» (needs based) բանաձևի, որը լայնորեն կիրառվում է աշխարհի շատ երկրներում:

⁸ Տե՛ս ՀՀ Կառավարության 24.08.2006 թ. N1262-Ն որոշումը «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Վերջին տարիներին, համաձայն մի շարք պետական ծրագրերի (ԱՀՌԾ, ՄԺԾԾ, կայուն զարգացման), հանրակրթության ոլորտին հատկացվող միջոցների աճը հիմնականում ուղղվել է աշխատավարձերի բարձրացմանը, ըստ որի դպրոցներն իրենց տարեկան բյուջեների շուրջ 90 տոկոսն ուղղում են աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին: Մնացած փոքր մասը (մինչև 10 տոկոսը) կազմում են ոչ աշխատավարձային ծախսերը, որոնք, ըստ էության, ուղղվելով դպրոցի պահպանման խնդիրների լուծմանը, իրականում չեն արտահայտում դպրոցի իրական կարիքները:

Ավելին, դպրոցների ոչ աշխատավարձային ծախսերը հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ոչ թե գործող նորմերը (օրինակ՝ շինարարական, սանիտարական, հիգիենիկ և այլն), այլ որոշվել են մնացորդային սկզբունքով: Այսինքն՝ դպրոցների ծախսերի հաշվարկների համար որպես հիմք են ծառայել 1998 թ. մեկ աշակերտի հաշվով փաստացի կատարված ծախսերը (ինչն էլ իջեցրել է պլանավորման և ֆինանսավորման մակարդակը): Տարիների ընթացքում առանձին ծառայությունների սակագների փոփոխությունները որոշ չափով հաշվի են առնվել դպրոցների ֆինանսական հատկացումների հաշվարկներում, սակայն դրանք ամբողջությամբ չեն արտացոլում դպրոցների իրական պահանջարկը այս կամ այն ապրանքի կամ ծառայության նկատմամբ, հետևաբար՝ չեն համապատասխանում դպրոցների իրական ծախսերի չափերին:

Բացի այդ, տարիների ընթացքում պետք է վերահաշվարկվեր նաև դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարը (Պգ): Սակայն տարիներ շարունակ դա ընդամենը ինդեքսավորվել է որոշակի գործակցով, ինչն իրականում չի արտահայտել դպրոցի պահպանմանն ուղղվող փաստացի ծախսերի շարժընթացը, մի բան, որ էլ ավելի է նվազեցրել բանաձևի հավաստիության (իրական ֆինանսական համապատասխանության) աստիճանը:

- Դպրոցների առանձին ծախսատեսակներ, որոնք ուղղակիորեն առնչվում են ուսումնական գործընթացին, չեն ներառվում բանաձևի հաշվարկներում: Դրանք պլանավորվում են կենտրոնացված կարգով, ֆինանսավորվում պետական բյուջեի առանձին ծրագրերով և, դրանով իսկ, զրկում դպրոցներին որոշում կայացնելու հնարավորությունից: Մասնավորապես՝ ուսուցիչների վերապատրաստման ծախսերը, տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճարները, գույք ձեռք բերելու ծախսերը, դպրոցների համացանցային կապի և համակարգչային սարքավորումների պահպանման ծախսերը, կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների ուսումը լիարժեք կազմակերպելու համար անհրաժեշտ լրացուցիչ գումարները և այլն, չեն ներառվում դպրոցների ֆինանսավորման բանաձևի մեջ:

Պետք է նշել, որ 2016 թվականին այդ ուղղությամբ կատարվել է դրական փոփոխություն. բանաձևում ներառվել են դպրոցի տարրական դասարանների և նախակրթարանի երեխաներին սննդով ապահովման և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերով ապահովման ծախսերը, որոնք նախկինում ևս ֆինանսավորվել են պետական բյուջեի առանձին ծրագրերով: Սակայն բանաձևի հետագա կատարելագործումը նշված ուղղություններով անհրաժեշտ է շարունակել:

Օգտագործված գրականություն

1. Հարությունյան Կ., Մաղաքյան Հ., Հարությունյան Վ., Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի ներդրումն ու կիրառումը, «Մանկավարժություն», հ. 1, 2, Եր., 2012:
2. Հարությունյան Կ., Մաղաքյան Հ., Հարությունյան Վ., Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի բարելավման ուղղությամբ առաջարկություններ, «Մանկավարժություն», հ.4, Եր., 2012:
3. Հարությունյան Կ., ՀՀ հանրակրթության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղությունների վերլուծությունը, «Մանկավարժություն», հ. 4, Եր., 2005:
4. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը, 1995:
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, 2002:
6. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, 2008:
7. «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, 2012:
8. «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, 2013:
9. ՀՀ Կառավարության 28.10.1998 թ. N661 որոշումը «Պետական հանրակրթական դպրոցների համակարգի հետագա ապակենտրոնացման մասին»:
10. ՀՀ Կառավարության 01.06.1999 թ. N377 որոշումը «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագիրը հաստատելու մասին»:
11. ՀՀ Կառավարության 12.10.2000 թ. N634 որոշումը «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագրի հետագա ընթացքի մասին»:
12. ՀՀ Կառավարության 24.08.2006 թ. N1262-Ն որոշումը «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
13. ՀՀ Կառավարության 27.03.2008 թ. N12 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը»:
14. ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N954-Ն որոշումը «ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:
15. ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թ. դեկտեմբերի 14-ի N992-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. դեկտեմբերի 15-ի N1313-Ն համատեղ հրամանը «2012 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:
16. ՀՀ Կառավարության 16.01.2014 թ. N16-Ն որոշումը «ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:
17. ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թ. դեկտեմբերի 7-ի N1077-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. դեկտ. 12-ի N1135-Ն համատեղ հրամանը «2013 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:

18. ՀՀ ֆինանսների նախարարի 20.01.2014 թ. N51-Ն և ՀՀ ԿԳ նախարարի 20.01.2014 թ. N35-Ն համատեղ հրամանը «2014 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:
19. ՀՀ ֆինանսների նախարարի 11.12.2015 թ. N 886-Ն և ՀՀ ԿԳ նախարարի 17.12.2015 թ. N1041-Ն համատեղ հրամանը «2016 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:
20. Alonso J., Sánchez A., *Reforming Education Finance in Transition Countries: Six Case Studies in Per Capita Financing Systems*. World Bank, Washington, D.C., 2011.
21. Ross K., Levačić R., *Need-Based Resource Allocation in Education: Via Formula Funding of Schools*. International Institute for Education Planning, UNESCO, Paris, 1999.
22. Levačić R., Downes P., *Formula Funding of Schools, Decentralization and Corruption: A Comparative Study*, International Institute for Education Planning, UNESCO, Paris, 2004.
23. The World Bank, *Per Capita Financing of Education in RF: Experience and Issues. Policy Note, Edition I*, Moscow, 2004.
24. Финансирование школьного образования в Российской Федерации: опыт и проблемы (Серия “Актуальные вопросы развития образования”), М., Издательство Алекс, 2004.
25. Fiszbein A. (editor). *Decentralizing Education in Transition Societies: Case Studies from Central and Eastern Europe*, World Bank Institute, World Bank, Washington D.C., 2001.

КАРИНЕ АРУТЮНЯН

*Заместитель министра образования и науки Республики Армения,
кандидат физико-математических наук*

Теоретические основы, принципы и методология подушевого финансирования общеобразовательных школ: анализ опыта Армении.— Начиная с 1998 года внедрение нового механизма подушевого финансирования государственных общеобразовательных школ стало составляющей частью структурных реформ в области общего среднего образования Республики Армения. Путем внедрения данного механизма был совершен переход от финансирования государственных школ по экономическим статьям государственного бюджета к финансированию единой суммой, согласно которой выделенная школе годовая сумма рассчитывается по определенной формуле, исходя из числа учеников (подушевое финансирование) и расходов, необходимых для содержания школы.

В данной статье представлены теоретические основы, принципы и методология финансирования общеобразовательных школ по формуле, а также обобщены результаты исследования международного опыта по внедрению и применению нового механизма финансирования.

В статье рассмотрены цели, задачи, основные принципы, методология разработки и ожидаемые результаты внедрения подушевого финансирования в Армении. По результатам анализа почти двадцатилетнего опыта применения формулы выявлены преимущества ее применения и проблемы. Разработаны предложения по дальнейшему улучшению формулы.

Ключевые слова: *система образования, формула финансирования, подушевое финансирование, финансирование исходя из потребностей, принципы финансирования, качество образования, общеобразовательная школа, эффективность школы, число учеников, величина школы, местонахождение школы, расходы на текущее содержание школ, национальные меньшинства.*
JEL: G17, G18, I21, I22, I25, I28

KARINE HARUTYUNYAN

*Deputy Minister of Education and Science of the Republic of Armenia,
PhD in Physics and Mathematics*

Theoretical Grounds, Principles and Methodologies of Per Capita Funding of General Schools: Analysis of the Armenian Experience.— Since 1998 the integral part of the structural reforms implemented in the general education system of Armenia has been the introduction of a new per capita funding mechanism of public schools. This mechanism has allowed to make a transition from State Budget's line item funding to a lump sum funding principle of schools. Accordingly, the annual amount allocated to individual schools is calculated by a formula, which is based on the number of students and school maintenance expenses.

This article presents the theoretical framework, principles and methodology of the formula funding of schools, as well as the summary of findings from the international experience of funding schools via these formulas.

The article also explores the overall goals, objectives, methodology, main principles and expected outcomes of introducing per capita formula funding of public schools in Armenia. It presents the main advantages as well as problems and issues of formula funding revealed during almost 20 years of its application. Recommendations for further development of the funding formula are provided.

Key words: *education system, funding formula, per capita funding, need based funding, funding principles, quality of education, general school, school efficiency, number of students, school size, school location, school maintenance, national minorities.*

JEL: G17, G18, I21, I22, I25, I28